«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 5-ի N 1753-L որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«-------» «---------- » 2021 թվականի N - L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 1753-L ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է***.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 5-ի «Աշխատիր, Հայաստան» ռազմավարությունը, դրա գործողությունների շրջանակը և ֆինանսական գնահատականը հաստատելու մասին» N 1753-L որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) N 1 հավելվածում՝

ա. «**ՆՊԱՏԱԿ 3.**» բաժնի «**Խնդիր 3.**» ենթաբաժնի «**Գործողություն 3.3.**»-ը և «**Գործողություն 3.4.**»-ն ուժը կորցրած ճանաչել,

բ. «**ՆՊԱՏԱԿ 4.**» բաժնի «**Խնդիր 1.**» ենթաբաժնի «**Գործողություն 1.2.**»-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Գործողություն 1.2. Աշխատանքային օրենսգրքի վերանայում, փոփոխությունների ներկայացում և ընդունում**»,

գ. «**ՆՊԱՏԱԿ 4.**» բաժնի «**Խնդիր 2.**» ենթաբաժնի «**Գործողություն 2.2.**»-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Գործողություն 2.2. Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների և լրացումների մշակում և ընդունում**».

2) N 2 հավելվածում՝

ա. «**ՆՊԱՏԱԿ 3.**» բաժնի «**Խնդիր 3.**» ենթաբաժնի «**Գործողություն 3.3.**» և «**Գործողություն 3.4.**» տողերն ուժը կորցրած ճանաչել,

բ. «**ՆՊԱՏԱԿ 4.**» բաժնի «**Խնդիր 1.**» ենթաբաժնի «**Ժամկետ**» սյունակում «2021» թիվը փոխարինել «2022» թվով.

գ. «**ՆՊԱՏԱԿ 4.**» բաժնի «**Խնդիր 1.**» ենթաբաժնի «**Գործողություն 1.2.**» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Գործողություն 1.2. Աշխատանքային օրենսգրքի վերանայում, փոփոխությունների ներկայացում և ընդունում	Աշխատանքային օրենսգրքում փոփոխությունները սահմանված են համապատասխան իրավական ակտով	Փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի առկայություն	0	1 հատ փոփոխված

դ. «**ՆՊԱՏԱԿ 4.**» բաժնի «**Խնդիր 2.**» ենթաբաժնի «**Գործողություն 2.2.**» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Գործողություն 2.2. «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների և լրացումների մշակում և ընդունում	Գործում է արհմիությունների զարգացումը խթանող՝ «Արհեստակցական միությունների մասին» փոփոխված օրենքը	Փոփոխված օրենքի առկայություն	Օրենքը լրամշակված է	Օրենք ընդուն Ազգայ ժողով կողմի

3) N 3 հավելվածում՝

ա. 32-րդ տողի «**Գործողության անվանումը**» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աշխատանքային օրենսգրքի վերանայում, փոփոխությունների ներկայացում և ընդունում»,

բ. 36-րդ և 37-րդ տողերն ուժը կորցրած ճանաչել,

գ. 39-րդ տողի «**Գործողության անվանումը**» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների և լրացումների մշակում և ընդունում»: